«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ դասախոս Քոչարյան Ա.Տ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Կոլիզիոն իրավունք

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

«Կոլիզիոն նորմերն» ավանդաբար համարվել են միջազգային մասնավոր իրավունքի գիտության ուսումնասիրության առարկան, մինչդեռ կոլիզիոն նորմերն իրավունքի տեսության և ճյուղային իրավունքի գիտությունների կողմից ընկալվում են որպես իրավական նորմերի կոլիզիաները լուծող կանոններ։ Այս դասընթացի շրջանակում ներկայացվում են կոլիզիոն նյութաիրավական նորմերը որպես պոզիտիվ իրավունքում ամրագրված այն կանոնները, որոնք սահմանում են, թե նորմերի կոլիզիայի դեպքում իրավասու մարմինը, որ նորմին պետք է նախապատվություն տա։

«Կոլիզիոն իրավունքի» տեսությունը պետության և իրավունքի տեսության բաժիններից է, որն ուսումնասիրում է իրավական նորմերի կոլիզիաները, մեկնաբանման կոլիզիոն կանոնները, կոլիզիոն նորմերը և իրավական կոլիզիաների լուծման ընդհանուր կառուցակարգերը։

Մեկնաբանման կոլիզիոն կանոնները մշակվել են իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում, և հետագայում պետության կողմից ճանաչվել են որպես պոզիտիվ իրավական նորմեր (կոլիզիոն նորմեր)։

«Կոլիզիոն իրավունքը», որպես հատուկ դասընթաց, պետք է դասավանդել իրավաբանական ֆակուլտետի բարձր կուրսերում։ «Կոլիզիոն իրավունք» դասընթացը բաղկացած է երկու մասից՝ կոլիզիոն նյութական իրավունքը և կոլիզիոն վարութային իրավունքը։ Կոլիզիոն նյութական իրավունքի շրջա-նակներում քննարկվում են կոլիզիոն իրավունքի տեսապատմական հարցերը, կոլիզիոն պոզիտիվ իրավունքը և կոլիզիոն իրավունքի փիլիսոփա¬յա¬կան հարցերը։

Կոլիզիոն վարութային իրավունքի շրջանակներում ներկայացվում են կոլիզիաների լուծման դատական և ոչ դատական ընթացակարգերը։

Դասընթացի նպատակը և խնդիրները։ Դասընթացի հիմնական նպատակը ուսանողների մոտ կոլիզիոն իրավունքի առաջացման, տիպերի, ձևերի, հասկացության և էության, մասին գիտելիքների ձևավորումն է, ինչպես նաև մասնագիտականմակարդակի իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումը։

Դասընթացի խնդիրները։

Դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խդիրները.

- ✓ Կոլիզոն իրավունքի վերաբերյալ ստացած գիտելիքների հիման վրա իրականացնել հասարակական քաղաքական կյանքի պետաիրավական երևույթների, պետության և իրավունքի գոյության և զարգացման ընդհանուր և հիմնական օրինաչափությունների համեմատական վերլուծություն,

- ✓ ձևավորել մասնագիտական արհեստավարժություն,
- ✓ ձևավորել պետաիրավական երևույթները վերլուծելու, ստացված տեսական գիտելիքները ճիշտ կիրառելու կարողություն։

2.1. Կրթական վերջնարդյունքները։ Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- Կոլիզիոն իրավունքի առաջացման հիմնական տեսությունները.
- Կոլիզիոն իրավունքի վերաբերյալ առկա մոտեցումները.
- Կոլիզիոն նյութական իրավունքը.
- Կոլիզիոն վարույթային իրավունքը.
- Կոլիզիոն նորմերը

կարողանա՝

- Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում.
- Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով օրենսդրության, տեսության և պրակտիկայի զարգացումը.

ունակ լինի՝

- Վերլուծել նորմատիվ իրավական ակտերը.
- Առաջադրվող խնդիրների շուրջ բանավեճերի և քննարկումների մասնակացնել, սեփական կարծիքն իրավաբանորեն հիմնավորել.
- Վեր հանել օրենսդրական բացերը և կոլիզիաները։

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար։ Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում։

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը,

	ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.1.Դասախոսություններ	16
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	40
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք

2.3. Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4

Բաժին 1. Կոլիզիոն իրավունքի տեսությունը	4	2	2
Թեմա 1. Իրավական համակարգի անհակասականության կանխավարկածը	2	1	1
Թեմա 2. Միջպետական և ներպետական կոլիզիոն իրավունքը	2	1	1
Բաժին 2. Կոլիզիոն կանոնները հայկական իրավունքում	6	3	3
Թեմա 1. Կոլիզիոն կանոնները հայոց իրավունքի պատմությունում	2	1	1
Թեմա 2. Կոլիզիոն կանոնները ժամանակակից հայկական իրավունքում	2	1	1
Թեմա 3. Կոլիզիոն կանոնների մրցակցությունը	2	1	1
Բաժին 3. Կոլիզիոն իրավունքի փիլիսոփայությունը	4	2	2
Թեմա 1. Իրավունքի սկզբունքների արտահամակարգային կոլիզիաները և ներհամակարգային կոնֆլիկտները	2	1	1

Թեմա 2. Իրավունքի և օրենքի կոլիզիաներն իրավունքի փիլիսոփայությունում	2	1	1
Բաժին 4. Իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերը	10	6	4
Թեմա 1. Իրավական կոլիզիաները լուծող սուբյեկտները և ընթացակարգերը	6	4	2
Թեմա 2. Իրավական կոլիզիաների լուծման միջոցները	4	2	2
Բաժին 5. Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը	8	4	4
Թեմա 1. Վերանայման օբյեկտները	2	1	1
Թեմա 2. Վերանայման իրավական հիմքերը	2	1	1
Թեմա 3. Վերանայման չափանիշները	2	1	1
Թեմա 4. Վերանայման սահմանները	2	1	1

Ընդհանուր	32	16	16

3. Դասընթացի թեմաները և ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Բաժին 1. Կոլիզիոն իրավունքի տեսությունը

Թեմա 1. Իրավական համակարգի անհակասականության կանխավարկածը

Թեմա 2. Միջպետական և ներպետական կոլիզիոն իրավունքը

Այս թեմաների շրջանակում ներկայացվում է ներպետական և միջպետական կոլիզիոն իրավունքի տարբերությունները և քննարկվում են ներպետական իրավական համակարգի անհակասականության կանխա¬վարկածին առնչվող խնդիրները:

Բաժին 2. Կոլիզիոն կանոնները հայկական իրավունքում

Թեմա 1. Կոլիզիոն կանոնները հայոց իրավունքի պատմությունում

Թեմա 2. Կոլիզիոն կանոնները ժամանակակից հայկական իրավունքում

Թեմա 3. Կոլիզիոն կանոնների մրցակցությունը

Այս թեմաների շրջանակում ներկայացվում են հայկական իրավունքում կոլիզիոն կանոնների ձևավորման և զարգացման պատմությունը, ներկա վիճակը: Քննարկվում են նաև գործող կոլիզիոն կանոնները և դրանց մրցակցության խնդիրները:

Բաժին 3. Կոլիզիոն իրավունքի փիլիսոփայությունը

Թեմա 1. Իրավունքի սկզբունքների արտահամակարգային կոլիզիաները և ներհամակարգային կոնֆլիկտները

Թեմա 2. Իրավունքի և օրենքի կոլիզիաներն իրավունքի փիլիսոփայությունում

Այս թեմաների շրջանակում քննարկվում են կոլիզիոն իրավունքի փիլիսոփայական ասպեկտները:

Բաժին 4. Իրավական կոլիզիաների լուծման կառուցակարգերը

Թեմա 1. Իրավական կոլիզիաները լուծող սուբյեկտները և ընթացակարգերը

Թեմա 2. Իրավական կոլիզիաների լուծման միջոցները

Այս թեմաների շրջանակում ներկայացվում են այն իրավունքի սուբյեկտները, որոնք առնչվում են իրավական կոլիզիաների հետ և լիազորված են լուծել դրանք տարբեր ընթացակարգերով և միջոցներով։

Բաժին 5. Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը

Թեմա 1. Վերանայման օբյեկտները

Թեմա 2. Վերանայման իրավական հիմքերը

Թեմա 3. Վերանայման չափանիշները

Թեմա 4. Վերանայման սահմանները

Այս թեմաների շրջանակում քննարկվում են նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության միջոցները որպես իրավական կոլիզիաները հաղթահարելուն ուղղված գործիքակազմ։ Դրանք ընդգրկում են նորմատիվ իրավական ակտերի դատական վերանայման օբեյկտներին, իրավական հիմքերին, չափանիշներին և սահմաններին առնչվող հարցերը։

4. Գրականության ցանկ

1. Ղամբարյան Ա., Խանդանյան Ռ., Զարիկյան Կ. Ղ 301 Կոլիզիոն իրավունք։ Գիտագործնական ձեռնարկ / Ա. Ղամբարյան, Ռ. Խանդանյան, Կ. Զարիկյան; Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր.: ՀՌՀ հրատ., 2023
2. Ղամբարյան Ա. Կոլիզիոն իրավունքի նորմերը (կանոնները) հայոց իրավունքի պատմությունում // Դատական իշխանություն: 2021, № 3-4 (261-262), էջ 3-16, 2021, № 5-6 (263-264), էջ 3-20
3. Խանդանյան Ռ. Դատական վերահսկողությունը նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ (պատմահիրավական էվոլյուցիան)։ Եր.: ՀՌՀ հրատ., 2022
4. Гамбарян А. С. Даллакян Л. Г. Коллизионные нормы и их конкуренция. М.: Юрлитинформ, 2019
5. Гамбарян А. С. Даллакян Л. Г. Проблемы конкуренции коллизионных норм в юридической науке и практике // Вестник Томского государственного университета. 2019. № 438. С. 201-209
6. Гамбарян А. С. Коллизионное правило “lex posterior” в армянском праве // Вестник Российского университета дружбы народов. Серия: Юридические науки. 2020. Т. 24. № 4. С. 1224-1239.
7. Ахметжанова К. В. Юридические коллизии: теория и практика: дисс. …канд. юрид. наук. М.: 2017
8. Власенко Н. А. Коллизионные нормы в советском праве: монография. Реп.изд. М.: Норма: ИНФРА, 2018
9. Власенко Н.А. Коллизионные нормы в советском праве. Монография. Иркутск, 1984

10. Васев И.Н. Коллизионное правовое регулирование: учеб.-практ.пособие.М.: Юрлитинформ, 2016
11. Занина М. А. Коллизии норм права равной юридической силы (понятие, причины, виды): автореф. дисс. …канд. юрид. наук. М .: 2008
12. Занина М.А. Коллизии норм права равной юридической силы (понятие, причины, виды): монография. 2-е изд., перераб. и доп. М.: РАП, Волтерс Клувер, 2010.
13. Толстик В. А. Иерархия источников российского права: автореф. дисс. … д–ра юрид. наук. Нижний Новгород, 2002
14. Иншаков С. М., Казакова В. А. Конституционные коллизии уголовного права// Актуальные проблемы экономики и права. 2016. № 4 (40)// URL: https://cyberleninka.ru
15. Петров А.А., Тихонравов Е.Ю. Пробелы и коллизии в праве: учебное и научнопрактическое пособие. М.: Проспект, 2017
16. Петров А.А. Вопросы преодоления коллизий норм кодексов, устанавливающих собственных приоритет// Вестник Санкт-Петербургского университета. Право Т. 10. 2019. Вып.1.
17. Петров А. А. Может ли коллизия юридических норм порождать пробел в праве? // Вестник Томского государственного университета. 2018. № 432.
18. Петров А.А Совпадение содержательной и темпоральной коллизий правовых норм // Журнал российского права. 2017. № 8 (248).
19. Сильченко Н. В. Проблемы иерархии источников права// Государство и право. 2018. № 4.
20. Юсифова Л. А., Безуглов С. В. Иерархия норм в Конституции РФ. Сборник статей по материалам X Всероссийской конференции молодых ученых, посвященной 120- летию И. С. Косенко. Отв. за вып. А. Г. Кощаев. 2017
21. Анцилотти Д. Курс международного права. Том первый: Введение – Общая теория / Перевод с четвертого итальянского издания А.Л. Сакетти и Э.М. Фабрикова; Под редакцией и с предисловием доктора юридических наук Д.Б. Левина. М.: Издательство иностранной литературы, 1961
22. Бержель Ж. Л. Общая теория права / под общ. ред. В.И. Даниленко / пер. с фр. М.: Издательский дом NOTA BENE, 2000
23. Гримм Д. Лекции по догме римского права (воспроизводится по пятому изданию С. Петербург, 1916 г.). М.: Изд. Зерцало, 2003// URL: https://legalns.com/ download/books/ lib/roman-law/book-001.pdf
24. Коркунов Н. М. Лекции по общей теории права. Сост., автор вступ. ст., коммент. А. Н. Медушевский. М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2010.
25. Регельсбергеръ Ф. Общее учение о праве. Перевод И. А. Базанова, под ред. проф. Ю. С. Гамбарова. Типография И. Д. Сытина. М.: 1897
26. Петров А. А., Шафиров В. М. Предметная иерархия нормативных правовых актов. М.: Проспект, 2014
27. Петров А.А. Внутренняя согласованность действующей Конституции РФ и

спорные вопросы преодоления коллизий в праве. URL: https://academia.edu
28. Стародубцева И. А. Коллизионное право: модель новой отрасли российского права. Saarbrucken: Lap Lambert, 2013
29. Тилле А.А. Время, пространство, закон: действие советского закона во времени и пространстве. М.: 1965
30. Эннекцерус Л. Курс германского гражданского права. Том I, полутом 1: Введение и общая часть / Л. Эннекцерус, Т. Кипп, М. Вольф; Перевод с 13-го немецкого издания проф. К.А. Граве, Г.Н. Полянской и В.А. Альтшулера; Под редакцией, с предисловием и вводными замечаниями заслуженного деятеля науки проф. Д.М. Генкина и проф. И.Б. Новицкого. – М.: Издательство иностранной литературы, 1949

Ինտերակտիվ կայքեր՝

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am
4. www.datalex.am

4. Գնահատման միջոցները

4.1. Գնահատման ցուցանիշները

A (88–100 միավոր) «Գերազանց».
Ուսանողը բացահայտում է իրավական խնդրի բոլոր էական կողմերը, իրականացնում է իրավական նորմերի ինքնուրույն և համակողմանի վերլուծություն, ճիշտ որոշում է իրավական կոլիզիայի առկայությունը և տեսակը, կիրառում է կոլիզիաների լուծման համապատասխան սկզբունքները (Lex superior, Lex posterior, Lex specialis և այլն)։ Վերլուծում է նորմատիվ իրավական ակտերի հարաբերակցությունը, հաշվի է առնում դրանց իրավաբանական ուժը, կարգավորման շրջանակը և ձևակերպում է հիմնավորված իրավական եզրահանգում։

B (76–87 միավոր) «Շատ լավ».
Ուսանողը բացահայտում է իրավական խնդրի հիմնական կողմերը, ընդհանուր առմամբ ճիշտ է որոշում կոլիզիայի տեսակը և կիրառում է դրա լուծման հիմնական կանոնները։ Իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի վերլուծություն, սակայն փաստարկման և ինքնուրույն եզրահանգումների առումով առկա են որոշ թերություններ։

C (64–75 միավոր) «Լավ».
Ուսանողը ճիշտ է որոշում կոլիզիոն իրավունքի հիմնական հասկացությունները և կոլիզիայի հիմնական բնութագրերը, սակայն վերլուծությունը հիմնականում կրում է

նկարագրական բնույթ։ Թույլ է տալիս առանձին անճշտություններ կոլիզիայի տեսակի որոշման, կիրառելի կոլիզիոն կանոնի ընտրության և եզրահանգումների հիմնավորման ժամանակ։

D (52–63 միավոր) «Բավարար».
Ուսանողը վերարտադրում է կոլիզիոն իրավունքի հիմնական դրույթները, սակայն դժվարանում է բացահայտել կոլիզիայի բնույթը, որոշել կիրառելի կոլիզիոն սկզբունքը և վերլուծել նորմատիվ իրավական ակտերի հարաբերակցությունը։ Եզրահանգումները բավարար չափով հիմնավորված չեն։

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային».
Ուսանողը տալիս է խնդրի ընդհանուր բնութագիր, սակայն չի իրականացնում ինքնուրույն իրավական վերլուծություն։ Թույլ է տալիս էական սխալներ կոլիզիայի տեսակի որոշման, համապատասխան կոլիզիոն կանոնի ընտրության և իրավական դիրքորոշման ձևավորման ժամանակ։

FX (20–39 միավոր) «Անբավարար».
Ուսանողը չի կարողանում բացահայտել իրավական կոլիզիան, չի տարբերակում կոլիզիաների հիմնական տեսակները և չի կարողանում կիրառել դրանց լուծման կանոնները։ Նորմատիվ իրավական ակտերի վերլուծությունը բացակայում է կամ կրում է մակերեսային բնույթ։

F (0–19 միավոր) «Անբավարար».
Ուսանողը չի տիրապետում կոլիզիոն իրավունքի հիմնական հասկացություններին և սկզբունքներին, չի կարողանում բացահայտել իրավական խնդիրը, որոշել կիրառելի նորմը և ձևակերպել իրավաբանորեն հիմնավորված եզրահանգում։

4.2. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ

Թեստային առաջադրանքներ

1. Եթե տարբեր նորմատիվ իրավական ակտերի երկու նորմեր ուժի մեջ են մտել տարբեր ժամանակահատվածներում, և այդ նորմերի միջև առկա կոլիզիան չի վերացվում այլ կանոններով, ապա կիրառվում է՝
<u>Ա. ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմը</u>
Բ. ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմը
Գ. գործադիր իշխանության մարմնի կողմից ընդունված ակտը
Դ. հատուկ օրենքը

2. Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում, երբ այն հնարավոր չէ վերացնել այլ կանոնների կիրառմամբ, կիրառվում է ֆիզիկական և իրավաբանական

անձանց համար առավել բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե՝
Ա. այդ նորմի կիրառմամբ չեն խախտվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը
Բ. բացակայում է դատական վեճը
Գ. նորմն ընդունվել է մյուս նորմից ավելի ուշ
Դ. ճիշտ պատասխան չկա

3. Նշված սկզբունքներից ո՞րն է արտահայտում «հատուկ նորմը վերացնում է ընդհանուր նորմը» կանոնը:
Ա. *Lex superior*
Բ. *Lex posterior*
Գ. *Lex specialis*
Դ. *Lex generalis*

Իրավիճակային առաջադրանք

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը սահմանում է վարչական ակտը վարչական կարգով բողոքարկելու երկամսյա ժամկետ՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից:
ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու երկամսյա ժամկետ՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից:
Նույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:
«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 31.05.2021 թվականը գործող խմբագրության 30-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում էր Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտերի վարչական կարգով բողոքարկման տասնօրյա ժամկետ՝ դրանց ուժի մեջ մտնելու պահից, ինչպես նաև այդ ակտերը դատական կարգով բողոքարկելու մեկամսյա ժամկետ՝ վարչական բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից, իսկ վարչական բողոք չներկայացնելու դեպքում՝ Հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո:

Հարցեր

- Արդյո՞ք «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 31.05.2021 թվականը գործող խմբագրության 30-րդ հոդվածի 9-րդ մասը հակասել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետին և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:
- Եթե այո, ապա ո՞ր կոլիզիոն կանոնով պետք է լուծվի տվյալ հակասությունը:

Տեսական հարցեր

1. Իրավական կոլիզիաների հասկացությունը և առաջացման պատճառները
2. Կոլիզիաների լուծման միջոցներն ու ընթացակարգերը
3. Կոլիզիոն մեկնաբանման կանոնները
4. Կոլիզիոն նորմերի հասկացությունը և տեսակները
5. Կոլիզիոն նորմերի գործառույթները
6. Կոլիզիոն նորմերի կառուցվածքը
7. Կոլիզիոն նորմերի ամրագրման եղանակները
8. Տարբեր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի միջև կոլիզիաները և դրանց լուծումը
9. Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի միջև կոլիզիաները և դրանց լուծումը
10. Տարբեր իրավական աղբյուրներում ամրագրված իրավական նորմերի կոլիզիաները և դրանց լուծումը
11. Կոլիզիոն նորմերի մրցակցության հասկացությունը
12. Կոլիզիոն նորմերի մրցակցությունը նախահեղափոխական իրավաբանական դոկտրինայում
13. Կոլիզիոն նորմերի մրցակցությունը խորհրդային իրավական մտքում
14. Կոլիզիոն նորմերի մրցակցությունը ռուսական իրավաբանական դոկտրինայում
15. Կոլիզիոն նորմերի մրցակցությունը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի
16. Կոլիզիաների և կոլիզիոն նորմերի մրցակցության լուծումը Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Բելառուսի Հանրապետության օրենսդրությունում
17. Կոլիզիաների և կոլիզիոն նորմերի մրցակցության լուծումը Անդրկովկասյան պետությունների օրենսդրությունում
18. Կոլիզիաների և կոլիզիոն նորմերի մրցակցության լուծումը Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի պետությունների օրենսդրությունում
19. Կոլիզիաների և կոլիզիոն նորմերի մրցակցության լուծումը Բալթյան երկրների օրենսդրությունում
20. Կոլիզիաների և կոլիզիոն նորմերի մրցակցության լուծումը Մոլդովայի օրենսդրությունում

4.3. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը

4.3.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը

Սեմինար պարապմունքները ներառում են տեսական հարցերի բանավոր քննարկում, թեստային և իրավիճակային առաջադրանքների լուծում: Գնահատվում են ընկալման խորությունը, փաստարկելու կարողությունը, տերմինաբանությանը տիրապետելը:

4.3.2. Ատեստավորման ձևը (ստուգարք)

Ստուգարքն անցկացվում է գրավոր կամ բանավոր ձևաչափով: Գրավորի պարագայում կազմվում են վերը հիշատակված թեստային և/կամ իրավիճակային առաջադրանքների օրինակով, բանավորի դեպքում՝ հարց/հարցեր վերը հիշատակված տեսական բլոկից:

Ուսանողներին դասախոսի հայեցողությամբ թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտերի տեքստեր:

4.3.3. Գնահատման ընթացակարգը

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով՝ հետագա փոխարկմամբ 7-բալյա համակարգի: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար):

Միավորների բաշխումը կախված է ձևաչափից և հարցերի բարդությունից:

4.3.4. Գնահատման չափանիշներ

Գնահատելիս հատկապես հաշվի են առնվում պատասխանի վերլուծական բնույթը (այլ ոչ թե սահմանումների պարզ թվարկումը), իրավական փաստարկման առկայությունը (ինչու է տվյալ մոտեցումը ճիշտ), կոնկրետությունը (հղումներ նորմատիվ ակտերին, դոկտրինալ դիրքորոշումներին, օրինակներին), ինչպես նաև կառուցվածքայնությունը (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն):

4.3.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ

Դասընթացի ուսումնառությունն իրականացվում է դասախոսությունների և սեմինարների ձևաչափով: Սեմինարները նպատակաուղղված են ուսանողների գիտելիքների խորացմանը, դասընթացի հիմնական թեմաների քննարկմանը և դրանց կիրառման գործնական հմտությունների ձևավորմանը:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքը կարևոր դեր է զբաղեցնում ուսումնասիրվող նյութի յուրացման գործընթացում: Այն ներառում է առաջարկվող գրականության կանոնավոր ուսումնասիրություն, դասերին նախապատրաստում, առարկայի հիմնական դրույթների ինքնուրույն մշակում, ինչպես նաև ինքնուրույն մտածողության և իրավական վերլուծության հմտությունների զարգացում:

Կոլիզիոն իրավունքի ուսումնասիրման կարևոր բաղադրիչներից է դատական պրակտիկային ծանոթացումը: Իրական գործերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու, թե ինչպես են գործնականում լուծվում իրավական կոլիզիաների հարցերը, և նպաստում է իրավական խնդիրների նկատմամբ մասնագիտական մոտեցման ձևավորմանը:

Դասընթացը հաջողությամբ յուրացնելու համար ուսանողներին անհրաժեշտ է պարբերաբար մասնակցել դասերին, ուսումնասիրել առաջարկվող աղբյուրները և ակտիվորեն ներգրավվել ուսումնական գործընթացում: